«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

IJEVAN BRANCH OF
"YEREVAN STATE UNIVERSITY"
FOUNDATION

STUDENT SCIENTIFIC
SOCIETY

ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 1,
sssysuib@gmail.com, ijevan.ysu.am

1 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 77-13-27-00

ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի

Ուսանողական գիտական ընկերության

(2020-2021 թթ. ուստարվա 1-ին կիսամյակ)

ք. Իջևան «01» դեկտեմբերի , 2020թ.

№	Նախատեսվող միջոցառման բնույթը	Խորագիրը / Թեման	Անցկացման օրը / շաբաթը	Համառոտ նկարագրությունը
1.	Հանդիպում-իրազեկում	Առաջինկուրսեցիների հետ	03.09-05.09	Հանդիպման ընթացքում համառոտ կներկայացվեն ՈՒԳԸ նպատակներն ու խնդիրները, ծավալած գործունեությունը, անդամակցության կարգը:
2.	Գիտական ակումբների հիմնում	«Պատմաբանների ակումբ» «Բանասերների ակումբ» «Օտար լեզուների ակումբ»	20.09	Ակումբների նպատակն է համախմբել նույն հետաքրքրությունն ունեցող ուսանողներին: Ակումբը բաղկացած կլինի 5-6 անդամից, նաև ակումբի պատասխանատուից: Ակումբների հիմնական գործառույթը կլինի մասնագիտական դասընթացներ,

				կինոդիտումներ, ստուգողական խաղեր կազմակերպելը: Ակումբները կօգնեն ուսանողներին մասնագիտական խորհուրդներով: ՈւԳԸ ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերում կտեղադրվի մասնակցության հայտադիմում՝ վերջնաժամկետով: Վերջնաժամկետը լրանալուն պես մասնակիցները կհրավիրվեն հարցազրույց-քննարկման: Այսպիսով կձևավորվեն գիտական ակումբներ, կնշանակվի ակումբի պատասխանատու:
3.	Գրքի քննարկում	Օնորե դը Բալզակ «Հայր Գորիո»	23.09	Քննարկումը կվարի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուսի ուսանողուհի Անուշ Խաչատրյանը: Քննարկման ընթացքում ուսանողներին համառոտ կներկայացվի գիրքը: Քննարկմանը զուգահեռ կցուցադրվեն համանուն ֆիլմի որոշ դրվագներ:
4.	Արշավ	Դեպի Սրվեղի վանք	30.09	Գիտահետազոտական արշավ կիրականացվի դեպի Սրվեղի վանք, որը գտնվում է գ. Այգեհովիտում: Այցի ընթացքում ուսանողները կծանոթանան Տավուշի մարզի հինավուրց պատմամշակութային վայրերից մեկին՝ Սրվեղի վանքին: Այս արշավները կկրեն շարունակական

				բնույթ։ Նպատակը՝ ուսանողությանը ծանոթացնել Տավուշի մարզի հինավուրց վայրերին։
5.	Կինոդիտում	«Բանականության խաղեր» (Игры разума)	08.10	Ֆիլմի ընթացքում ուսանողները կծանոթանան մաթեմատիկայի կյանքին։ Կտեսնեն, թե ինչ դժվարությունների ու փորձությունների միջով անցավ գլխավոր հերոսը՝ նախքան հաջողության հասնելը։ Կիմանան, թե ով դարձավ առաջին մաթեմատիկոսը և ստացավ «Նոբելյան մրցանակ» տնտեսագիտության ոլորտում։
6.	Ասմունքի մրցույթ	«Պոեզիան մեր հոգում»	20.10	Կհայտարարվի ասմունքի մրցույթ՝ հայերեն և օտար լեզուներով: Հայտադիմումը կտեղադրվի կայքում։ Մասնակիցները կհրավիրվեն ՈՒԳԸ սենյակ։ Օր կորոշվի և կհայտարարվի մրցույթ։ Երեք հորիզոնական զբաղեցրած մասնակիցները կպարգևատրվեն պատվոգրերով։ 1-ին հորիզոնական զբաղեցրած ուսանողը նաև անակնկալ նվերով:
7.	Դասընթաց-սեմինար	«Առաջին բուժօգնություն»	22.11	Դասընթացը կվարի Հայկական Կարմիր Խաչի ընկերության Տավուշի մարզային և մասնաճյուղի Առաջին բուժօգնության բաժնի պատասխանատու, ԱՕ ավագ հրահանգիչ Մարինե Սարիբեկյանը:

				Դասընթացի շրջանակում ուսանողները կսովորեն մի շարք կարևոր հմտություններ: Մասնակցություն կունենան բոլոր գործընթացներին և կկիրառեն:
8.	Դասընթաց-սեմինար	«Մեդիագրագիտության»	25.11	Սեմինարը կվարի «Ֆինանսներ» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի Իրա Վարդանյանը: Դասընթացի շրջանակում ուսանողները կիմանան, թե ինչպես տարբերակել կեղծ և հավաստի լուրերը: Կսովորեն մեդիայից ավելի գրագետ օգտվելու սկզբունքները, ապատեղեկատվության տեսակները: Դասընթացի վերջում կանցկացվի խաղ quizizz.com կայքի միջոցով, որի շնորհիվ ուսանողները գործնականում կկիրառեն ստացած գիտելիքները
9.	Ցուցահանդես-տոնավաճառ	«Հանուն մեր զինվորների»	24.11	Բարեգործական ցուցահանդես-տոնավաճառի նպատակն է օգնել պատերազմում վիրավորում ստացած զինվորներին: Կիրականցվի հավաքագրում: Կվաճառվեն գրքեր, նկարներ, մրգեր, մուրաբաներ, ձեռքի աշխատանքները և այլն: Հասույթը կփոխանցվելու է զինվորներին՝ առողջության վերականգնման համար:
10.	Գիտական ակումբների հիմնում	«Մանկավարժների ակումբ» «Տնտեսագետների ակումբ»	28.11	Այն սկզբունքով, որով բացվել են նախորդ 3 գիտական ակումբները, կբացվեն ևս 3 գիտական

		«Տուրիզմի ակումբ»		ակումբներ։
11.	Կինոդիտում	«Հետապնդելով երջանկությանը»	10.11	ՈւԳԸ ֆեյսբուքյան և ինստագրամյան պաշտոնական էջերում նախօրոք կտեղադրվի կինոդիտման հայտադիմումը։ Ֆիլմը խոհախրատական բնույթի է և հանդիսատեսի մեծ համակրանքն է վայելել։ Կյանքի, մարդկային հարաբերությունների և նպատակներին հասնելու մասին է։
12.	Առցանց միջոցառում	«Հայկազեան շաբաթ»	14.12-20.12	ՈւԳԸ ինստագրամյան պաշտոնական էջում մեկ շաբաթ շարունակ կտեղադրվեն միայն Հայաստանի ու հայերի մասին մի շարք փաստեր, այդ թվում մշակութային գանձերի։ Կիրականացվի նաև վիկտորինա։ Նպատակը՝ ուսանողության էլ ավելի մոտ ծանոթացնել Հայաստանի պատմությանը, մշակույթին և այլնին։
13.	Կոնֆերանս	«Կոնֆերանս՝ հետպատերազմական կարևոր ծրագրերով»	27.01-31.01	Հունվար ամսին՝ եզրափակիչ քննություններից հետո, բոլոր ՈւԳԸ անդամների կոնֆերանս տեղի կունենա։ Առաջինկուրսեցիները այդ ժամանակ արդեն ՈւԳԸ անդամ դարձած կլինեն, իրենց համար կլինի իրազեկում։ Կներկայացվեն ՈւԳԸ կառուցվածքը, նախագահությունը և նոր գիտական ակումբները։ Մանրամասն կներկայացվեն կարևոր ծրագրերը։ Կիրականացվեն խաղեր։

				«Դասընթացների ամրագրման» մասին կհայտարարվի։

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ՝ Մ. Ասիլյան

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ քարտուղար՝ Ա.Խաչատրյան